Մրցույթ՝ ԿԶՆԱԿ հիմնադրամի ՄԿՈՒԶԱԿ հիմնարկի ՄԿՈ ծրագրամեթոդական և փորձաքննության բաժնի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՄԿՈ ծրագրամեթոդական և փորձաքննության բաժնի մասնագետի հիմնական գործառույթները՝

ա) իրականացնել պետական կրթական չափորոշիչների (այսուհետ ՊԿՉ), ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի մշակման աշխատանքներ կազմակերպում,

բ) իրականացնել պետական կրթական չափորոշիչների (այսուհետ ՊԿՉ), ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի վերանայման աշխատանքների կազմակերպում,

գ) իրականացնել ՄԿՈՒ հաստատություններում պարտադիր և փորձարարական կարգով ներդրված պետական կրթական չափորոշիչների և մոդուլային ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների մշտադիտարկման և փորձարկման արդյունքների վերլուծական աշխատանքներ,

դ) մասնակցել ոլորտային հանձնաժողովների կողմից ՊԿՉ փորձաքննության կազմակերպման աշխատանքներին,

ե) մասնակցել բաժնի փորձագիտական աշխատանքներին (ՊԿՉ, մոդուլային ուսումնական ծրագրեր, ուսումնական պլաններ, փորձարարական ծրագրեր, լրացուցիչ կրթական ծրագրեր և այլն),

զ) մասնակցել բաժնի աշխատանքային պլանից բխող նպատակային ծրագրերի մշակման կամ իրականացման աշխատանքներին,

է) կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն,

ը) նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ գրություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. Բարձրագույն կրթություն:
2. Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի կրթության կազմակերպման աշխատանքային փորձ (առնվազն հինգ տարի, առավելությունը կտրվի ՄԿՈՒ ուսումնական հաստատությունում աշխատած թեկնածուին):
3. Ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր կազմելու կարողություն:
4. Համակարգչային հմտություններ.
   - Տեքստային խմբագիր MS WORD-ով վարժ աշխատելու կրողություն
   - PowerPoint համակարգով տեսասահիկ պատրաստելու կարողություն,
   - MS EXCEL Էլեկտրոնային աղյուսակներ կազմելու կարողություն,
   - Ինտերնետից օգտվելու կարողություն,

- Համակարգչային տեխնիկայից (scaner,printer) օգտվելու կարողություն:

5. Թիմում լավ աշխատելու, գործընկերություն ստեղծելու, աշխատանքներ կազմակերպելու, ժամանակի արդյունավետ կառավարման ունակություններ,
6. Գրավոր և բանավոր հաղորդակցության գերազանց հմտություններ:
7. Հայերեն՝ գրավոր և բանավոր գերազանց հմտություններ:
8. Օտար լեզուների իմացություն, 2-ից ավել օտար լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն:

Դիմումների ընդունման ժամկետն է՝ 30.01.2023 – 7.02.2023 թթ.:

Աշխատավարձի չափը՝ 190.000 ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) գրավոր դիմում՝ (ձև 1, կցված է) նշելով այն թափուր տեղի անվանումը, որին հավակնում է,
2) անձնագրի պատճենը,
3) ինքնակենսագրություն (ձև 2, կցված է),
4) թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
5) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
6) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են զինգրքույկ:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացվում են միայն էլեկտրոնային փոստի միջոցով (էլ. փոստ ncvetd@gmail.com):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 07.02.2023 թ.:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային և հարցազրույց: Հարցազրույցի փուլը կկայանա ս/թ. փետրվարի 10-ին՝ ժամը 11^{30}-ին, հեռավար ձևաչափով /մրցույթի փատաթղթային փուլը անցած հավակնորդների էլեկտրոնային հասցեներին հարցազրույցի համար կուղարկվի համապատասխան հղումը/:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (033) 57-21-07 հեռախոսահամարով, աշխատանքային օրերին մինչև ժամը 17:30: